ЕРЛИЦКІЙ, А. Ф.—О причинахъ душевныхъ болѣзней. Публичная лекція (*Հոգեկան հիւանդութիւնների պատճառների մասին. Հրապարակական դասախօսութիւն Ա. Ֆ. Երլիցկու*)։

Պ. Երլիցկու դասախօսութիւնը «Հոգեկան հիւանդութիւնների պատճառների մասին» որ, նա կարդացել էր սոյն փետրուար ամսին Պետերբուրգում յօգուտ ուսանողների՝ մօտ օրերս լոյս տեսաւ առանձին բրօշիւրով նոյն բարեգործական նպատակով։

Վերոյիշեալ դասախօսութեան նիւթը այնքան հետաքրքրելի է, որ աւելորդ չէ ծանօթացնել նրա հետ հայ ընթերցողին։

Պ. Երլիցկին նախ և առաջ ուսումնասիրում է ժառանգականութեան նշանակութիւնը. Ֆիզիկական և հոգեկան յատկութիւնները անցնում են ծնողներից դէպի որդիք. Նրա ասելով ժառանգականութիւնը առաջին տեղն է բռնում հոգեկան հիւանդութիւնների բոլոր յայտնի պատճառների շարքում։

Ժառանգական նախատրամադրութիւնը (предрасположеніе) դէպի հոգեկան հիւանդութիւնները շատերի մօտ մնում է առժամանակ թաքուն և միմիայն կեանքի որոշ ժամանակամիջոցներում են նոքա երեւան գալիս։

Ընդհակառակն—ուրիշների մօտ ժառանգական նախատրամադրութիւնը դէպի հոգեկան հիւանդութիւնները երեւում է որ և է այլանդակութեամբ օրգանիզմի ֆիզիկական կազմուածքի, զ. օ. երեսի, բերանի, ատամների աչքերի, գանգի այլակերպութիւններով և այլն։

Զգայուն սիստեմը, հոգեկան մթնոլորտը և բարոյականը այդպիսի անձերի մօտ այլակերպուած է լինում։

Այդպիսիները օրոշւում են հոգեկան գործունէութեան թուլութեամբ, կամ նոյն հոգեկան գործունէութեան ուժեղանալովը և յաջորդող թուլութիւնով։ Այդպիսի անձերը անկարող են լինում կառավարել իրանց կամքը, բանականութիւնը և զգացմունքները։ Ժառանգականութեան դերը հոգեկան հիւանդութիւնների մէջ երկու տեսակի է լինում։ Առաջին տեսակին պատկանում են այն դէպքերը, երբ ժառանգականութիւնը հող է պատրաստում հոգեպէս արագ հիւանդանալու համար։ Երկրորդ դէպքում ժառանգականութիւնը ինքն ըստ ինքեան հիւանդանալու պատճառ է լինում։

Կայ մի ամբողջ շարք հոգեկան հիւանդութիւնների, ուր միմիայն ժառանգականութիւնն է հիւանդանալու պատճառ հանդիսանում։

Բոլոր վերոյիշեալից պ. Երլիցկին այն եզրակացութիւնն է անում որ ամուսնութեան պտուղ ժառանգներին՝ հոգեկան հիւանդութիւնների նախատրամադրութիւնից ազատ կացուցանելու համար՝ պէտք է լինի այնպիսի ծնողների ընտրութիւն, որոնք ժառանգականապէս առողջ են։

Հոգեկան հիւանդութիւնների միւս պատճառները, որոնց ակնարկում է

պ. Երլիցկին, սրանք են՝

1) Անկանոն դաստիարակութիւն,

2) Հակասառողջապահական պայմանները դաստիարակութեան միջոցին,

3) Պատանեկական հասակ սեռական հակումների ազդեցութեան ներքոյ,

4) Չափազանցրած մտաւոր աշխատութիւն հակասառողջապահական, բարոյական և ֆիզիկական պայմանների հետ միաժամանակ,

5) Մարդկային գործունէութեան չափազանցրած մրցումն,

6) Մի քանի մաշող հիւանդութիւններ,

7) Ուղեղին ճնշումը,

8) Ջղային հիւանդութիւններ՝ իստերիա և էպիլեպսիա.

9) Սիֆիլիս,

10) Ալկոհոլիզմ.

11) Մորֆինիզմ և վերջապէս՝

12) Ծերութեան հասակ.

Բրոշիւրի վերջումը կան երկու տոհմագրական աղիւսակներ, որոնք պատկերացնում են պ. Երլիցկու ասածները ժառանգականութեան մասին.

Առաջին աղիւսակում ցուցակագրած են Յուլիոս Կեսարի և Օկտաւիանոս Օգոստոսի ազգակցուած յաջորդները.

Միւս աղիւսակը կազմած է նոյն կերպով վերաբերմամբ աւստրիական տոհմի իսպանիական ճիւղի ժառանգներին. Այդ աղիւսակները լուսաբանում են ժառանգականութեան աւերիչ ներգործութիւնը հոգեկան հիւանդութիւնների և բոլոր հոգեբանական ախտերի նկատմամբ.

Բժիշկ Ն. Ումիկեան.

Նոր ստացուած գրքեր

---

1) ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑՈՒ յիշատակարանը. Հրատարակեց իւր յառաջաբանով Կարապետ ԿՈՍՏԱՆԵԱՆՑ. Թիֆլիս, տպ. Ց. Մարտիրոսեանցի, 1892 թ., գինն է 25 կոպէկ.

2) ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԿԱՒԱԳ.—«Սասմայ ծռեր, Սասունցի Դաւիթ» (ժողովրդական վէպի երկու նոր վարիանտներ). Հրատարակութիւն Թիֆլիսի Հայ. Գրք. Հրատ. Ընկ., Թիֆլիս, տպ. Շարաձէի, 1892 թ., գինն է 50 կ.

3) ՊԱՐՈՆԵԱՆ, Յ. Յ.—«Հոսհոսի ձեռատետրը», «Պտոյտ մը Պոլսոյ թաղերու մէջ» և «Խիկարի գուշակութիւն», մի գրքում ամփոփած, հրատարակութիւն Թիֆլ. Հայ. Գրք. Հրատ. Ընկերութեան, Թիֆլիզ, տպար. Շարաձէի, 1892 թ., գինն է 1 ռուբլի.